

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-056

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

Ս.Վ. ՄԱԼԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի

(հրավաքանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ)

ՄԻՋԵՎ

առողջապահության նախարարությունը,

(այսուհետ՝ Պատվիրատու)

որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող, մի կողմից՝ ի դեմս առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պարտականություններ կատարող՝ Վահե Հակոբյանի, որը գործում է առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա և

Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն ՓԲԸ-ն (լիցենզիա*)

(այսուհետ՝ Կատարող)

ի դեմս տնօրեն՝ Ալեքսանդր Մալայանի, որը գործում է Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (միայն իրավաբանական անձանց դեպքում), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը պարտավորվում է առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում ցուցաբերել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում (այսուհետ՝ Բուժօգնություն) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրա իրավունքը ունեցող անձանց՝ Պատվիրատուի կողմից թույլատրված Բուժօգնության տեսակների գծով, սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված ծառայություններով և գներով, սույն պայմանագրի հավելված 2-ով սահմանված պայմանագրային գումարի շրջանակներում:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողն իրավունք ունի.

2.1.1. սույն պայմանագրով սահմանված կարգով ստանալ փոխհատուցում սույն պայմանագրի պայմաններին համապատասխան ծավալով և որակով մատուցված Բուժօգնության համար,

2.1.2. անհրաժեշտության դեպքում հիմնավորել Պատվիրատուին ներկայացված Բուժօգնության վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատությունը՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով,

2.1.3. հերթագրման ոչ ենթակա դեպքերում Բուժօգնության պայմանագրային ծավալների ամսական համամասնությունների գերակատարման հետևանքով հաշվետու ժամանակահատվածում չներկայացված հաշվետվությունները ներկայացնել Պատվիրատուին փոխհատուցման՝ սույն պայմանագրով հաստատված պայմանագրային գումարի շրջանակներում,

2.1.4. ներկա գտնվել Պատվիրատուի կողմից բժշկական կազմակերպությունում իրականացվող դիտարկումներին, մշտադիտարկումներին, ուսումնասիրություններին, փորձագիտական գործունեությանը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել Պատվիրատուի գործողությունները,

2.1.5. օգտվել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

2.2. Կատարողը պարտավոր է.

2.2.1. Բուժօգնությունն իրականացնել ոլորտը կարգավորող օրենքներին, որոշումներին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի (այսուհետ՝ Նախարար) անհատական և նորմատիվ հրամաններին համապատասխան,

2.2.2. յուրաքանչյուր ամսվա համար մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 2-րդ աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը (դեկտեմբեր ամսվա համար մինչև դեկտեմբերի 15-ին հաջորդող 2-րդ աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը) էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով ամփոփել և ներկայացնել Բուժօգնության շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ (նախարարի 24.01.2011թ-ի N 63-Ա հրամանով հաստատված «Պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքներն ըստ բյուջետային ծրագրերի և բժշկական ծառայությունների տեսակների» հաշվետվությունը /Ձև N HP-011/ և /Ձև N SC-011/) պայմանագրային գումարի ամսական համամասնությունների ծավալներին համապատասխան՝ սույն պայմանագրի 5-րդ հավելվածով սահմանված չափաբանակների շրջանակներում, հավելված 2-ով նշված ծրագրերին համապատասխան առանձին ընդունման-հանձնման արձանագրություններ և հաշվարկային փաստաթղթեր, ինչպես նաև իր կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ նախարարի կողմից և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվություններ, ձևեր և տեղեկանքներ,

* Կ-XX-000385 տրված 05/11/2003թ-ին:

2.2.3. ապահովել սույն պայմանագրին կից «Ծառայությունների մատուցման պայմանները» (հավելված 3),

2.2.4. Պատվիրատուի կողմից էլ. առողջապահական համակարգի տվյալների փոխանցումն ապահովող ցանցի (data network) ներդրման դեպքում 14 օրյա ժամկետում միանալ տվյալ ցանցին՝ միևնույն ժամանակ ունենալով էլ. առողջապահական համակարգի տվյալների փոխանցման ցանցը սպասարկող մատակարարից տարբերվող այլ մատակարարի կողմից մատուցվող պահուստային կապուղի՝ ապահովելով 10 օգտատիրոջ հաշվով 2 մբ/վ սիմետրիկ ինտերնետ սնուցում,

2.2.5. ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրականացվող Բուժօգնության մասին տեղեկատվության հրապարակայնությունը, այդ թվում՝ բնակչության համար տեսանելի վայրում տեղադրելով համապատասխան տեղեկատվություն Բուժօգնության տրամադրման հետ կապված հարցերի կամ բողոքների ներկայացման կարգի Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշմամբ հաստատված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1717-Ն որոշմամբ հաստատված բնակչության սոցիալական խմբերի և այն հիվանդությունների ցանկերի, որոնց դեպքում դեղերը հատկացվում են անվճար կամ արտոնյալ պայմաններով, Նախարարի հրամաններով հաստատված «Հիմնական դեղերի ցանկի», հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ցանկերի և սահմանված արտոնությունների մասին,

2.2.6. պացիենտի հետ կնքել Նախարարի 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ 12-Ա և 2011 թվականի փետրվարի 1-ի թիվ 104-Ա հրամաններով հաստատված համավճարային կամ վճարովի հիմունքներով հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագիր,

2.2.7. ապահովել պետության կողմից երաշխավորված անվճար Բուժօգնություն ստացող անձանց իրազեկման թերթիկի լրացումը և տրամադրումը պացիենտներին՝ համաձայն Նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3274-Ա հրամանով հաստատված կարգի,

2.2.8. ապահովել գոյացած ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը՝ պահպանելով ծախսերի իրականացման հետևյալ առաջնահերթությունները.

2.2.8.1. աշխատավարձ,

2.2.8.2. հարկային պարտավորություններ,

2.2.8.3. դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնում,

2.2.8.4. այլ ծախսեր,

2.2.9. սահմանել աշխատողների աշխատավարձը, այդ թվում՝ ըստ բուժաշխատողների տարբեր կատեգորիաների աշխատավարձի նվազագույն ամսական չափերը, Նախարարի հրամաններով հաստատված՝ աշխատողների աշխատանքի վարձատրության հաշվարկման և վճարման չափորոշիչներին համապատասխան,

2.2.10. ապահովել Պատվիրատուի կողմից սահմանված կարգով և հաստատված ձևերով իրականացվող Բուժօգնության հաշվառումը, գրանցումը, մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ՝ սահմանված ժամկետներում և տեխնիկական չափանիշներին համապատասխան, ինչպես նաև ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգի սպասարկումը սեփական միջոցներով,

2.2.11. դեպքերի անհատական վարում իրականացնելու նպատակով (case management) Նախարարի կողմից հաստատված ծրագրերի կամ ծառայությունների մասով ապահովել հաճախորդների այցելությունների, բժշկական միջամտությունների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ դրանց փաստացի կատարման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում,

2.2.12. ապահովել առնվազն բժիշկների, միջին բուժանձնակազմի, ինպես նաև էլեկտրոնային առողջապահության համակարգից օգտվող վարչատնտեսական անձնակազմի նույնականացման քարտերի առկայությունը,

2.2.13. ապահովել հետևյալ տվյալների մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ՝

2.2.13.1. բժշկական և վարչական անձնակազմի անհատական և կոնտակտային տվյալներ,

2.2.13.2. անձնակազմի պաշտոնների և կառուցվածքի վերաբերյալ տվյալներ,

2.2.13.3. բժշկական անձնակազմի աշխատանքային և ոչ աշխատանքային ժամերի վերաբերյալ տվյալներ,

2.2.13.4. բժշկական կազմակերպությունում առկա բժշկական սարքավորումների վերաբերյալ տվյալներ,

2.2.13.5. բժշկական կազմակերպության տվյալները (այդ թվում՝ անվանում, հեռախոս, հասցե, ՀՎՀՀ, պատասխանատուի վերաբերյալ անհատական տվյալներ և այլն),

2.2.13.6. բժշկական կազմակերպության ղեկավարի անհատական և կոնտակտային տվյալները,

2.2.13.7. պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող բոլոր բժշկական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը (այդ թվում՝ նաև առանձին դեպքերով չֆինանսավորվող այցերի մասով)՝ համաձայն էլեկտրոնային առողջապահության համակարգում սահմանված ձևի,

- 2.2.13.8. այլ տվյալներ՝ համաձայն էլեկտրոնային առողջապահության համակարգում պահանջվող տվյալներ,
- 2.2.14. ապահովել սույն պայմանագրի 2.2.13. կետում նշված յուրաքանչյուր տվյալի փոփոխության դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրանց թարմացումը էլեկտրոնային առողջապահության համակարգում,
- 2.2.15. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր իրավասության սահմաններում ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգից մշակվող տեղեկատվության գաղտնիությունը,
- 2.2.16. ապահովել ներկայացված հաշվետվությունների տվյալների իսկությունը և արժանահավատությունը, որի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ինքն է կրում պատասխանատվություն,
- 2.2.17. նախքան դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնման պլանները և հայտարարությունները հրապարակվելը Պատվիրատուի պահանջով դրանք տրամադրել Պատվիրատուին,
- 2.2.18. պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների համար՝ ապահովել ընկերության տարեկան զարգացման ծրագրով սահմանված ցուցանիշների, այդ թվում՝ շահութաբերության ապահովման կատարումը,
- 2.2.19. պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին,
- 2.2.20. Պատվիրատուի կողմից դիտարկում, մշտադիտարկում, ուսումնասիրություն, փորձագիտական գնահատում իրականացնելու ամբողջ ընթացքում ապահովել Պատվիրատուին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի և այլ տեղեկատվության ներկայացումը, ապահովել համապատասխան մասնագետների համար աշխատանքային պայմաններ, օժանդակել աշխատանքները ժամանակին և լիարժեք կատարելու հարցում,
- 2.2.21. ապահովել սույն պայմանագրի գաղտնի հավելված 4-ով սահմանված դրույթների կատարումը, ինչպես նաև այդ դրույթների կատարման հիմքով իրեն հայտնի դարձած, օրենքով պաշտպանվող կամ այլ տեղեկությունների գաղտնիությունը,
- 2.2.22. Պատվիրատուի կողմից սահմանված ընթացակարգով ապահովել բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների գնահատմանն ուղղված կազմակերպչական աշխատանքները, ինչպես նաև ընթացք տալ (իրագործել) գնահատման արդյունքների հիման վրա բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման և աշխատողների աշխատանքային գործունեության վերաբերյալ Պատվիրատուի ներկայացրած առաջարկություններին,
- 2.2.23. սույն պայմանագրի հավելված 2-ով նախատեսված՝ 200,0 մլն ՀՀ դրամը գերազանցող կազմակերպությունը մինչև օգոստոսի 31-ը ապահովում է անկախ աուդիտորի կողմից հաստատված նախորդ տարվա ֆինանսական հաշվետվություններ և աուդիտորական եզրակացություն: Ընդ որում, սույն պայմանագրի հավելված 2-ով նախատեսված 1000,0 մլն դրամը գերազանցող կազմակերպությունների կողմից ընտրված աուդիտ իրականացնող կազմակերպությունը պետք է բավարարի սույն պայմանագրի հավելված 6-ով նախատեսված պայմաններին,
- 2.2.24. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ սահմանված կարգով բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց Բուժօգնության համար քվտաների շրջանակներում տրամադրված ուղեգրերի վերաբերյալ հանձնաժողով ձևավորող բժշկական կազմակերպությունները Նախարարի կողմից սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն առողջապահության նախարարություն,
- 2.2.25. Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուց հետո 15-օրյա ժամկետում տրամադրել վերջին 2 տարիների ընթացքում պետական պատվերի պայմանագրի շրջանակներում իր կողմից դուրս գրած դեղատոմսերի պատճենները,
- 2.2.26. կատարել Բուժօգնության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի.

- 2.3.1. սույն պայմանագրի համաձայն, իրականացնել դիտարկումներ, մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ, փորձագիտական գնահատում Կատարողի կողմից Բուժօգնության կատարման ընթացքի, Նախարարի կողմից հաստատված չափորոշիչներով և Պայմանագրով սահմանված ծավալների, որակի, Կատարողի գործունեությունը բնութագրող տեղեկատվության արժանահավատության և ստացված ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման ճշտության և իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման և պահպանման վերաբերյալ, սահմանել հայտնաբերված թերությունները սեփական միջոցներով վերացնելու ողջամիտ ժամկետ,

2.3.2. հիվանդանոցային Բուժօգնության մասով իրականացնել Բուժօգնության ընթացիկ մշտադիտարկման աշխատանքներ՝ տվյալ բժշկական կազմակերպությանը կցագրված Պատվիրատուի ներկայացուցիչների միջոցով, որոնց իրավասությունների շրջանակը և կցագրումները ըստ բժշկական կազմակերպությունների հաստատվում են Նախարարի հրամանով,

2.3.3. պայմանագրով նախատեսված աշխատանքների ուսումնասիրության, դիտարկման, մշտադիտարկման, փորձագիտական գնահատման արդյունքներով հայտնաբերված թերությունները վկայակոչելու և դրանց հետ կապված պահանջներ ներկայացնելու՝ աշխատանքն ընդունելուց հետո մինչև երեք տարվա ընթացքում: Սույն կետը կիրառվում է նաև կողմերի միջև մինչև սույն պայմանագրի կնքումը ծագած հարաբերությունների նկատմամբ՝ կապված նախորդ երկու տարիների ընթացքում պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ձեռքբերման հետ,

2.3.4. ամբողջությամբ կամ մասնակի չֆինանսավորել դեպքերի անհատական վարման (case management), մշտադիտարկման, դիտարկման կամ ուսումնասիրություն իրականացնելու ընթացքում հայտնաբերված՝

2.3.4.1. Բուժօգնության այն ծավալները, որոնք ըստ Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով ներկայացված հաշվետվությունների՝ պացիենտին մատուցվել են ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ պատշաճ ծավալի և որակի,

2.3.4.2. պացիենտի ախտորոշմանը չհամապատասխանող լաբորատոր-գործիքային հետազոտություններով կամ բուժման պլանով կամ բժշկի կողմից նշանակված դեղերով բժշկական օգնության մատուցման դեպքերը,

2.3.4.3. ոլորտը կարգավորող իրավական ակտերի դրույթների չպահպանման դեպքերում,

2.3.5. առողջության առաջնային պահպանում իրականացնող կազմակերպություններում Նախարարի կողմից սահմանված Բուժօգնության որակի չափանիշները և ցուցանիշները չապահովելու դեպքում Կատարողի կողմից կատարված փաստացի աշխատանքների ծավալներում իրականացնել նվազեցումներ Նախարարի կողմից սահմանված կարգով,

2.3.6. Կատարողի կողմից սույն պայմանագրով սահմանված միևնույն դրույթը պայմանագրի գործողության ժամկետում կրկնակի խախտելու դեպքում՝

2.3.6.1. կիրառել սույն պայմանագրով նախատեսված տույժեր, տուգանքներ և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության այլ միջոցներ,

2.3.6.2. միակողմանի լուծել պայմանագիրը՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածը,

2.3.7. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է.

2.3.8. միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է սույն պայմանագրի դրույթները: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

2.3.8.1. մատուցված ծառայությունները չեն համապատասխանում սույն պայմանագրով սահմանված պահանջներին,

2.3.8.2. խախտվել են ծառայությունների մատուցման ժամկետները,

2.3.9. պահանջել պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքների վճարում,

2.3.10. պահանջել և 15-օրյա ժամկետում ստանալ Կատարողի կողմից վերջին 2 տարիների ընթացքում պայմանագրի շրջանակներում իր կողմից դուրս գրած դեղատոմսերի պատճենները,

2.3.11. կրել Բուժօգնության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

2.4. Պատվիրատուն պարտավոր է.

2.4.1. իրավական ակտերով սահմանված ժամկետներում ընդունել և ամփոփել Կատարողի կողմից իրականացված Բուժօգնության վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները և ներկայացնել վճարման,

2.4.2. սահմանված կարգով ապահովել ֆինանսավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի մուտքագրումը և այլ անհրաժեշտ գործողությունների կատարումը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, իսկ դեկտեմբեր ամսվա առաջին կեսի համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը՝ Կատարողի կողմից սույն պայմանագրի 2.2.2. կետով սահմանված ժամկետների պահպանման պայմանով,

2.4.3. կատարողին ցուցաբերել անհրաժեշտ կազմակերպամեթոդական օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պաշտոնական կայք-էջում ստեղծել հատուկ դարան և տեղադրել պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերը,

- 2.4.4. վճարումներ իրականացնելիս՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ապահովել Կատարողի նկատմամբ տույժերի և տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը,
- 2.4.5. եթե պատվիրատուն պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պատվիրատուն պայմանագրի կողմին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման ընդունման արձանագրությունը: Ընդ որում, պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը (էլեկտրոնային հասցեով հանձնելու դեպքում հիմք է ընդունվում ուղարկման ամսաթիվը),
- 2.4.6. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից,
- 2.4.7. կատարել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

III. ՎԵՐԱՀՍՎՈՒՄ

- 3.1. Կատարողի կողմից սույն պայմանագրի շրջանակներում մատուցված կամ մատուցվող ծառայությունների որակի և ծավալի համապատասխանության գնահատումը սույն պայմանագրի պահանջներին իրականացվում է՝
- 3.1.1. ՀՀ օրենսդրությամբ և Նախարարի հրամանով հաստատված ընթացակարգով՝ մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման (case management) միջոցով,
- 3.1.2. Կատարողի կողմից դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնման նպատակով կնքված պայմանագրերի, ինչպես նաև գնման գործընթացների ընտրանքային մշտադիտարկում իրականացնելու միջոցով, այդ թվում՝ Կատարողից այդ գործարքներին առնչվող բոլոր փաստաթղթերը պահանջելով և ստանալով, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքներով բացահայտված խնդիրների շտկման նպատակով համապատասխան գործողություններ իրականացնելով՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ (վերաբերվում է միայն 50% և ավելի պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպություններին):

IV. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 4.1. Սույն պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Ընդ որում, տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ, իսկ տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:
- 4.2. Պարտավորությունների ոչ պատշաճ կատարում է համարվում նաև՝
- 4.2.1. եթե Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքարված տվյալներում յուրաքանչյուր ծրագրի մասով հայտնաբերված թերությունների, անճշտությունների կամ ոչ արժանահավատ դեպքերի թիվը ամսական կտրվածքով կազմում է ներկայացված հաշվետվությունների 5 տոկոսը կամ ավելին,
- 4.2.2. Կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված Բուժօգնության ծավալները ոչ ամբողջությամբ կամ մասնակի կամ ոչ պատշաճ որակի Բուժօգնության տրամադրումը՝ Պատվիրատուի կողմից Կատարողին սույն պայմանագրի գործողության ընթացքում առնվազն մեկ անգամ գրավոր տեղեկացրել է նախազգուշացնելուց հետո նույն խախտումը կրկնվելու կամ այն չվերացնելու դեպքում,
- 4.3. սույն պայմանագրով հաշվետվությունների ներկայացման ժամկետները խախտելու դեպքում Կատարողից ուշացման յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ հաշվետու ժամանակահատվածում ներկայացման ենթակա կատարողականի արժեքի 0,05%-ի չափով,
- 4.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով,
- 4.5. Կատարողը սահմանված կարգով և չափերով պատասխանատվություն է կրում նաև սույն պայմանագրի 3-րդ հավելվածում՝ «Ծառայությունների մատուցման պայմաններում» նշված պարտավորությունների չկատարման համար,

4.6. սույն պայմանագրի շրջանակներում մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման միջոցով հայտնաբերված այն խախտումների գումարը, որոնք կատարվել են սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածում, Պատվիրատուն պակասեցնում է Կատարողի ընթացիկ տարվա փաստացի աշխատանքների ծավալից, իսկ սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածից դուրս հայտնաբերված խախտումների արձանագրված գումարը փոխանցվում է ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշիվներին,

4.7. Պատվիրատուի կողմից հայտնաբերված խախտումների ճշտումը չի ազատում Կատարողին իր պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվությունից,

4.8. տուգանքի և տույժի վճարումը Պատվիրատուին և Կատարողին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները ամբողջությամբ կատարելու կամ խախտումները վերացնելու պարտականությունից,

4.9. սույն պայմանագրի շրջանակում նախատեսված տուգանքները և տույժերը հաշվարկվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.10. սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Պատվիրատուին և Կատարողին իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե եղել է անհաղթահարելի ուժի ազդեցություն, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

VI. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

6.1. Սույն պայմանագիրը կարող է լուծվել, եթե կողմերը կամ լուծարվել, կամ վերակազմակերպվել, կամ սնանկ են ճանաչվել՝ հատուցելով կողմերի կատարած ծախսերը,

6.2. Սույն պայմանագիրը կարող է լուծվել 2.3.8. և 5.1 կետերով նախատեսված դեպքերում,

6.3. Սույն պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել՝ 7.2 կետում նշված համաձայնագրի կնքումից Կատարողի հրաժարման դեպքում,

6.4. ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 31.12.2019 թվականը: Պայմանագրի պայմանները կիրառվում են 2018թ. դեկտեմբերի 15-ից մինչև պայմանագիր կնքելը, բայց ոչ ուշ, քան 2019թ. հունվարի 31-ը կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագիր կնքվելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է Պայմանագիրը սույն կետի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

7.2. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ (պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության տեսակների նորմատիվներում և գներում, Կատարողի պայմանագրային գումարներում Նախարարի համապատասխան հրամաններով իրականացվող փոփոխությունները և լրացումները) կարող են կատարվել համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի փոփոխման կամ լուծման դեպքում տվյալ պահին բուժումը դեռ չավարտած պացիենտների բուժման հետագա փոխհատուցումը իրականացնելու նպատակով, Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պակասեցման ենթակա ծառայության մասով բուժումը շարունակող պացիենտների ցանկը և հիվանդության պատմագրերի համարները:

7.4. Կողմերի միջև վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5. Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, արգելվում է կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայությունների ծավալների կամ, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.6. Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ որում, արգելվում է միևնույն բյուջետային տարվա ընթացքում նույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ:

7.8. Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան Կողմի (ֆինանսների նախարարության) գրավոր համաձայնության:

7.8.1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.9. Սույն պայմանագիրը և նրան կից հավելվածները կազմված են հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, որոնցից մեկը գտնվում է Պատվիրատուի, մյուսը՝ Կատարողի մոտ՝ բացառությամբ գաղտնի հավելված 4-ի:

VIII. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Առողջապահության նախարարություն

ԿԱՏԱՐՈՂ

Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն ՓԲԸ

Հասցե Երևան, Կառավարական տուն 3

Հասցե Ֆուչիկի 30

Սպասարկող ՖՆ գործառնական վարչություն
բանկ

Սպասարկող Հայրիգնեսբանկ ՓԲԸ Քանաքեռ մ/6
բանկ

Բանկային 900011105013

Բանկային 1150005701980100

հաշիվ
ՀՎՀՀ 02507171

հաշիվ
ՀՎՀՀ 01203444

ԱՆ գլխավոր քարտուղարի պարտականություններ
կատարող՝
Վահե Հակոբյան

Տնօրեն՝

Ալեքսանդր Մալայան

/ստորագրություն/

/ստորագրություն/

« 29 » հունվարի 2019 թ

« 29 » հունվարի 2019 թ

Հեռ: +37460808003

Հեռ: +37410344944

Ֆաքս:

Ֆաքս:

E-mail: info@moh.am

E-mail: alexmalayan@yahoo.com

ՑԱՆԿ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՆԵՐԻ

ԵՐԵՎԱՆ
Ս.Վ. ՄԱԼԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
(տարածաշրջանի և բժշկական կազմակերպության անվանումը)

Ծառայու թյան կոդը	Բժշկական օգնության և սպասարկման տեսակը և ծառայությունը	Չափման միավորը	Գին	Միավորի օրական գինը (դրամ)
2.14	Դատաբժշկական փորձաքննություն			
0301461	Դատաբժշկական փորձագետի ուղեգրումով հետազոտում /մեծ/	խՏՈՐՈՇՈՒ	30000	
0301462	Դատաբժշկական փորձագետի ուղեգրումով հետազոտում ցերեկային ստաց. /մեծ/	խՏՈՐՈՇՈՒ	12000	
0601441	Դատաբժշկական փորձագետի ուղեգրումով հետազոտում /երեխա/	խՏՈՐՈՇՈՒ	30000	
0601442	Դատաբժշկական փորձագետի ուղեգրումով հետազոտում ցերեկային ստաց./երեխա/	խՏՈՐՈՇՈՒ	12000	
2.16.1	Կլինիկական			
0707200	Շնդհանուր (կամ կլինիկական) հետազոտություններ՝ 1 անձին առնվազն 3 բաղադրիչի որոշումով	ՀԵՏԱՁՈՏ.	1050	
0707202	Արյան ընդհանուր քննություն լեյկոֆորմուլայով	ՀԵՏԱՁՈՏ.	1050	
0707203	Արյան ընդի քննույթ՝ առանց լեյկոֆորմուլայի՝ 1 անձին առնվազն 3 բաղադրիչի որոշումով	ՀԵՏԱՁՈՏ.	490	
0707204	Մեզի ընդհանուր քննություն	ՀԵՏԱՁՈՏ.	490	
0707205	Շնդհանուր (կամ կլինիկական) հետազոտություններ՝ 1 անձին մինչև 3 բաղադրիչի որոշման դեպքում յուրաքանչյուր բաղադրիչը	ՀԵՏԱՁՈՏ.	490	
0707206	Արյան ընդի քննույթ՝ առանց լեյկոֆորմուլայի՝ 1 անձին մինչև 3 բաղադրիչի որոշումով	ՀԵՏԱՁՈՏ.	160	
2.16.2	Կենսաքիմիական (բիոքիմիական)			
0707160	Բիոքիմիական հետազոտություն՝ 1 անձին առնվազն 3 բաղադրիչի որոշումով	ՀԵՏԱՁՈՏ.	1050	
0707162	Արյան մեջ խոլեստերինի որոշում	ՀԵՏԱՁՈՏ.	380	
0707163	Բիոքիմիական հետազոտ՝ 1 անձին մինչև 3 բաղադրիչի որոշման դեպքում յուրաքանչյուր բաղադրիչը	ՀԵՏԱՁՈՏ.	490	
2.16.3	Բջջաբանական			
0707180	Ֆիտոլոգիական հետազոտություն	ՀԵՏԱՁՈՏ.	1050	
2.16.4	Ծճաբանական (սերոլոգիական)			
0707010	Արյան խմբի որոշում	ՀԵՏԱՁՈՏ.	1050	
0707020	Ռեզուս գործոնի որոշում	ՀԵՏԱՁՈՏ.	1050	
0707040	Ռեակցիա ТРНА	ՀԵՏԱՁՈՏ.	1900	
0707050	Ռեակցիա VDRL	ՀԵՏԱՁՈՏ.	1300	
0707060	Ռեակցիա MRP	ՀԵՏԱՁՈՏ.	1050	
0707070	Վասերմանի ռեակցիա (RW)	ՀԵՏԱՁՈՏ.	1050	
2.16.7	Մանրէաբանական			
0707080	Սնկերի և գոնոկոկերի բակտերիոլոգիական քննություն	ՀԵՏԱՁՈՏ.	1650	
0707140	Բակտերիոլոգիական հետազոտություն	ՀԵՏԱՁՈՏ.	1500	
0707141	Խորխի բակտերիոլոգիական հետազոտություն	ՀԵՏԱՁՈՏ.	1600	
0707142	Խորխի բակտերիոլոգ. հետազոտ. դեղորայքային զգայնության որոշումով	ՀԵՏԱՁՈՏ.	1900	
0707143	Մանտուի փորձ, Տուբերկուլինոդիագնոստիկա	ՀԵՏԱՁՈՏ.	290	
0707151	Խորխի բակտերիոսկոպիկ հետազոտություն	ՀԵՏԱՁՈՏ.	490	
0707152	Բակտերիոսկոպիկ հետազոտություն	ՀԵՏԱՁՈՏ.	490	
2.16.10	Մակաբուժական			
0707090	Պարագիտար հիվանդությունների բակտերիոսկոպիկ քննություն արյան մեջ	ՀԵՏԱՁՈՏ.	1450	
2.16.11	Իմունաբանական			
0707025	ՄԻԱՎ-ի (ՁԼՇ) հետազոտություն	ՀԵՏԱՁՈՏ.	1450	
0707030	Հեպատիտ В, Հեպատիտ С (ուրաբանչյուր մեկ հետազոտություն)	ՀԵՏԱՁՈՏ.	1650	
2.20	Փունջիցիոնալ ախտորոշիչ			
0707171	ԷԿԳ	ՀԵՏԱՁՈՏ.	1400	
3.19	Ակնաբանական			
0301110	Ակնաբուժական (մեծ)	ԴԵՊԲ	77200	
0301111	Ակնաբուժական, ցերեկային ստացիոնարում (մեծ)	ԴԵՊԲ	30880	
0301112	Աչքի էքսամերային-լազերային վիրահատության պետական մասնակցություն՝ մեկ աչքի համար /մեծ./	ԴԵՊԲ	125000	
0301113	Աչքի էքսամերային-լազերային վիրահատության պետական մասնակցություն՝ երկու աչքի համար /մեծ./	ԴԵՊԲ	250000	
0301114	Վիտրիո-ռետինալ վիրահատություն (առանց սիլիկոնի լուղի և ձևեր հեղուկի արժեքի) /մեծ/	ԴԵՊԲ	98600	
0301116	Ինտերստիցիալ լազերային թերմոթերապիայի պետական մասնակցություն՝ մեկ միավոր /մեծ/(ակնաբան.)	ԴԵՊԲ	150000	
0301117	Գլաուկոմայի սուր նոպայի բուժում՝ առանց վիրահատական միջամտության (մեծ)	ԴԵՊԲ	30900	
0301118	Ակնաբուժական փոքր վիր. միջամտություն (մեծ)	ԴԵՊԲ	12300	
0301119	Ակնաբուժական փոքր վիրաբուժական միջամտություններ /մեծ/	ԴԵՊԲ	12300	
0302003	Կատարակտի վիրահատություն ներառյալ ռսպնյակի արժեքը՝ անկախ վիրահատության մեթոդից /մեծ/	ԴԵՊԲ	100000	
0601110	Ակնաբուժական (երեխա)	ԴԵՊԲ	102300	
0601111	Ակնաբուժական, ցերեկային ստացիոնարում (երեխա)	ԴԵՊԲ	40920	
0601112	Աչքի էքսամերային-լազերային վիրահատության պետական մասնակցություն՝ մեկ աչքի համար /երեխա/	ԴԵՊԲ	125000	
0601113	Աչքի էքսամերային-լազերային վիրահատության պետական մասնակցություն՝ երկու աչքի համար /երեխա/	ԴԵՊԲ	250000	
0601114	Վիտրիո-ռետինալ վիրահատություն (առանց սիլիկոնի լուղի և ձևեր հեղուկի արժեքի) (երեխա)	ԴԵՊԲ	163700	
0601116	Գլաուկոմայի սուր նոպայի բուժում՝ առանց վիրահատական միջամտության (երեխա)	ԴԵՊԲ	51100	
0601117	Ակնաբուժական փոքր վիրաբուժական միջամտություններ /երեխա/	ԴԵՊԲ	20500	
0601122	Նորածինների վիրաբուժական վիրահատություն	ԴԵՊԲ	665000	
0602003	Կատարակտի վիրահատություն ներառյալ ռսպնյակի արժեքը՝ անկախ վիրահատության մեթոդից /երեխա/	ԴԵՊԲ	100000	
0601116	Ինտերստիցիալ լազերային թերմոթերապիայի պետական մասնակցություն՝ մեկ միավոր /երեխա/(ակնաբան.)	ԴԵՊԲ	150000	
0612003	Կատարակտի վիրահատություն երեխաների համար առանց ռսպնյակի արժեքի՝ անկախ վիրահատության մեթոդից	ԴԵՊԲ	80000	
0901000	Աչքի հիվանդությունների ախտորոշման նպատակով իրականացվող համալիր հետազոտություն	խՏՈՐՈՇՈՒ	6000	
0901001	Աչքի համակարգչային պերիմետրիա (երկու աչք)	ՀԵՏԱՁՈՏ.	4000	
0901002	Աչքի համակարգչային պերիմետրիա (մեկ աչք)	ՀԵՏԱՁՈՏ.	2800	
0901003	Ֆանցաթաղանթի էլեկտրոֆիզիոլոգիական հետազոտություն (երկու աչք)	ՀԵՏԱՁՈՏ.	2000	
0901004	Տնտրական նյարդի հարուցված պոտենցիալներ (մեկ աչք)	ՀԵՏԱՁՈՏ.	2000	
0901005	Ֆանցաթաղանթի անոթների անգիոգրաֆիա (մեկ աչք)	ՀԵՏԱՁՈՏ.	8000	
0901006	Աչքի առաջնային հատվածի համակարգչային շերտային նկարահանում (մեկ աչք)	ՀԵՏԱՁՈՏ.	10000	
0901007	Ֆանցաթաղանթի համակարգչային շերտային նկարահանում (մեկ աչք)	ՀԵՏԱՁՈՏ.	6000	

0901008	Ֆանգաթաղանքի համակարգչային շերտային նկարահանում (երկու աչք)	ՀԵՏԱԶՈՏ.	8000
0901009	Աչքի համակարգչային տոմոգրաֆիա (մեկ աչք)	ՀԵՏԱԶՈՏ.	16000
0901010	Աչքի հիվանդությունների ֆիզիոթերապիայի (գործիքային) բուժում՝ բուժման կուրսը	ԴԵՊՔ	20000
0901011	Նորածինների ռեթինոպատիաների սկրինինգ	ՀԵՏԱԶՈՏ.	5000
1100321	Մասնակի քլեֆառոպատիկա	ԴԵՊՔ	105000
1101500	Խալաչդինի, քսանտեղացմայի հեռացում՝ ստացիոնար պայմաններում	ԴԵՊՔ	35000
1101501	Պտկիկային գերաճի հեռացում	ԴԵՊՔ	35000
1101502	Արիեստական ոսպնյակի էքսպլանտացիա	ԴԵՊՔ	49000
1101503	Վիրահատություն ցանցենու շերտազատման կապակցությամբ	ԴԵՊՔ	49000
1101504	Սիլիկոնի լուղի հեռացում՝ ամբուլատոր պայմաններում	ԴԵՊՔ	35000
1101505	Տերմինալ գավոտ գլաուկոմայի ակտիվիզացիա	ԴԵՊՔ	49000
1101506	Ֆանգաթաղանքի պնևմոպեկտիա, պատովածքի և պանտեոնալ լազերոկոագուլացիա	ԴԵՊՔ	63000
1101507	Ամնեոտիկ մեմբրանի տրանսպլանտացիայով I-ին էտապ	ԴԵՊՔ	49000
1101508	Ամնեոտիկ մեմբրանի տրանսպլանտացիայով II-րդ էտապ	ԴԵՊՔ	49000
1101509	Առաջնային կամերայի լվացում, բքի ռեկոնստրուկցիա	ԴԵՊՔ	49000
1101510	Անկազնի հեռացում առանց տրանսպլանտացիայի, էվիդեցերացիա առանց տրանսպլանտացիայի	ԴԵՊՔ	119000
1101511	Էնտրոպիոնի և էլյուպիոնի հեռացում՝ տրանսպլանտացիայով	ԴԵՊՔ	119000
1101512	Շյության շտկում մկանների տրանսպլանտացիայով	ԴԵՊՔ	119000
1101513	Արցունքատար ուղիների տրանսպլանտացիա	ԴԵՊՔ	119000
1101514	Արցունքալարի էքսերպացիա	ԴԵՊՔ	119000
1101515	Կատարակտայի էքստրակցիա առանց ոսպնյակի արժեքի	ԴԵՊՔ	119000
1101516	Սինտատրաբեկուլեկտոմիայի վիրահատություն (ավանդական եղանակով)	ԴԵՊՔ	119000
1101518	Շունտավորում (ներառյալ շունտը)	ԴԵՊՔ	119000
1101519	Իմպլանտացիա աֆակիկ աչքում (առանց ոսպնյակի արժեքի)	ԴԵՊՔ	119000
1101520	Անխանձորի հեռացում՝ տրանսպլանտացիայով, էվիդեցերացիա տրանսպլանտացիայով	ԴԵՊՔ	175000
1101521	Սինտատրաբեկուլեկտոմիայի, կատարակտայի էքստրակցիայով	ԴԵՊՔ	175000
1101522	Օրբիտայի էլեգենտերացիա չարորակ նորագոյացության կապակցությամբ	ԴԵՊՔ	175000
1101523	Ներակնակազմային ուռուցքի հեռացում	ԴԵՊՔ	175000
1101524	Հետաձգված ներակնակազմային իմպլանտացիա կոնյուկտիվա խոռոչի տրանսպլանտացիայով	ԴԵՊՔ	175000
1101525	Ծիածնաթաղանքի տրանսպլանտացիա բքի ձևափոխումով երկրորդային կատարակտայի հեռացմամբ, ծիածնաթաղանքի կյուրոմայի պլաստիկայով	ԴԵՊՔ	175000
1101526	Սիլիկոնի լուղի հեռացում՝ կատարակտայի էքստրակցիայով	ԴԵՊՔ	175000
1101527	Աչքի առաջնային հատվածի ռեկոնստրուկցիա	ԴԵՊՔ	175000
1101528	Դակրիոցիստոդինոստոմիա	ԴԵՊՔ	175000
1101529	Սինտատրաբեկուլեկտոմիայի վիրահատություն՝ կարերի ոչ ինվազիվ ձևով հեռացման	ԴԵՊՔ	175000
1101530	Ծիածնաթաղանքի կիստայի հեռացում և ծիածնաթաղանքի պլաստիկա	ԴԵՊՔ	175000
1101531	Կատարակտայի էքստրակցիա ֆակոեմուլսիֆիկացիայի մեթոդով՝ առանց ոսպնյակի արժեքի	ԴԵՊՔ	175000
1101532	Կերատոպլաստիկա	ԴԵՊՔ	175000
1101533	Հետաձգված ներակնակազմային իմպլանտացիա կոնյուկտիվա խոռոչի տրանսպլանտացիայով	ԴԵՊՔ	175000
1101534	Կերատոպլաստիկա (եղջերաթաղանքի պատվաստում համակցված ներակնային ոսպնյակի տեղադրումով), աֆակիայի դեպքում՝ առանց ոսպնյակի արժեքի	ԴԵՊՔ	175000
1101535	Վիտրեկտոմիա առանց ապակենման մարմնի փոխարինողների ներարկման	ԴԵՊՔ	210000
1101536	Լենսփիտրեկտոմիա առանց ապակենման մարմնի փոխարինողների ներարկման և արիեստական ոսպնյակի	ԴԵՊՔ	210000
1101537	Վիրահատություն ցանցենու շերտազատման կապակցությամբ՝ առանց ապակենման մարմնի փոխարինողների ներարկման	ԴԵՊՔ	210000
1101538	Վիտրեկտոմիա + ցիրկլա՝ առանց ապակենման մարմնի փոխարինողների ներարկման	ԴԵՊՔ	210000
1101539	Անկազնի բարդ և բարդացած (կոմբինացված, համակցված) վերքերի վիրաբուժական մշակում (բացառապես վնասվածքների ժամանակ)	ԴԵՊՔ	65000
1101540	Ֆանգաթաղանքի պանտեոնալ ֆոտոլազերոկոագուլացիա (մեկ աչք)	ԴԵՊՔ	20000
1101541	Պտուգի ուղղում՝ առանց սիլիկոնային լարի արժեքի	ԴԵՊՔ	210000
1101542	Սինտատրաբեկուլեկտոմիայի վիրահատություն՝ կատարակտայի ֆակոեմուլսիֆիկացիայով առանց ոսպնյակի արժեքի	ԴԵՊՔ	210000
1101543	Սիլիկոնի լուղի հեռացում՝ հիվանդանոցային պայմաններում	ԴԵՊՔ	119000
1101544	Կոոսպիկինգ (մեկ աչք)	ԴԵՊՔ	98000
1101545	Կատարակտայի ֆակոեմուլսիֆիկացիա սիլիկոնի լուղի հեռացումով՝ առանց արիեստական ոսպնյակի	ԴԵՊՔ	210000
2100321	Մասնակի քլեֆառոպատիկա	ԴԵՊՔ	105000
2101500	Խալաչդինի, քսանտեղացմայի հեռացում՝ ստացիոնար պայմաններում	ԴԵՊՔ	35000
2101501	Պտկիկային գերաճի հեռացում	ԴԵՊՔ	35000
2101502	Արիեստական ոսպնյակի էքսպլանտացիա	ԴԵՊՔ	49000
2101503	Վիրահատություն ցանցենու շերտազատման կապակցությամբ	ԴԵՊՔ	49000
2101504	Սիլիկոնի լուղի հեռացում՝ ամբուլատոր պայմաններում	ԴԵՊՔ	35000
2101505	Տերմինալ գավոտ գլաուկոմայի ակտիվիզացիա	ԴԵՊՔ	49000
2101506	Ֆանգաթաղանքի պնևմոպեկտիա, պատովածքի և պանտեոնալ լազերոկոագուլացիա	ԴԵՊՔ	63000
2101507	Ամնեոտիկ մեմբրանի տրանսպլանտացիայով I-ին էտապ	ԴԵՊՔ	49000
2101508	Ամնեոտիկ մեմբրանի տրանսպլանտացիայով II-րդ էտապ	ԴԵՊՔ	49000
2101509	Առաջնային կամերայի լվացում, բքի ռեկոնստրուկցիա	ԴԵՊՔ	49000
2101510	Անկազնի հեռացում առանց տրանսպլանտացիայի, էվիդեցերացիա առանց տրանսպլանտացիայի	ԴԵՊՔ	119000
2101511	Էնտրոպիոնի և էլյուպիոնի հեռացում՝ տրանսպլանտացիայով	ԴԵՊՔ	119000
2101512	Շյության շտկում մկանների տրանսպլանտացիայով	ԴԵՊՔ	119000
2101513	Արցունքատար ուղիների տրանսպլանտացիա	ԴԵՊՔ	119000
2101514	Արցունքալարի էքսերպացիա	ԴԵՊՔ	119000
2101515	Կատարակտայի էքստրակցիա ներառյալ ոսպնյակի արժեքը	ԴԵՊՔ	119000
2101516	Սինտատրաբեկուլեկտոմիայի վիրահատություն (ավանդական եղանակով)	ԴԵՊՔ	119000
2101518	Շունտավորում (ներառյալ շունտը)	ԴԵՊՔ	119000
2101519	Իմպլանտացիա աֆակիկ աչքում (առանց ոսպնյակի արժեքի)	ԴԵՊՔ	119000
2101520	Անխանձորի հեռացում՝ տրանսպլանտացիայով, էվիդեցերացիա տրանսպլանտացիայով	ԴԵՊՔ	175000
2101521	Սինտատրաբեկուլեկտոմիայի, կատարակտայի էքստրակցիայով	ԴԵՊՔ	175000
2101522	Օրբիտայի էլեգենտերացիա չարորակ նորագոյացության կապակցությամբ	ԴԵՊՔ	175000
2101523	Ներակնակազմային ուռուցքի հեռացում	ԴԵՊՔ	175000
2101524	Հետաձգված ներակնակազմային իմպլանտացիա կոնյուկտիվա խոռոչի տրանսպլանտացիայով	ԴԵՊՔ	175000
2101525	Ծիածնաթաղանքի տրանսպլանտացիա բքի ձևափոխումով երկրորդային կատարակտայի հեռացմամբ, ծիածնաթաղանքի կյուրոմայի պլաստիկայով	ԴԵՊՔ	175000
2101526	Սիլիկոնի լուղի հեռացում՝ կատարակտայի էքստրակցիայով	ԴԵՊՔ	175000
2101527	Աչքի առաջնային հատվածի ռեկոնստրուկցիա	ԴԵՊՔ	175000
2101528	Դակրիոցիստոդինոստոմիա	ԴԵՊՔ	175000
2101529	Սինտատրաբեկուլեկտոմիայի վիրահատություն՝ կարերի ոչ ինվազիվ ձևով հեռացման	ԴԵՊՔ	175000
2101530	Ծիածնաթաղանքի կիստայի հեռացում և ծիածնաթաղանքի պլաստիկա	ԴԵՊՔ	175000
2101531	Կատարակտայի էքստրակցիա ֆակոեմուլսիֆիկացիայի մեթոդով՝ ներառյալ ոսպնյակի արժեքը	ԴԵՊՔ	175000
2101532	Կերատոպլաստիկա	ԴԵՊՔ	175000
2101533	Հետաձգված ներակնակազմային իմպլանտացիա կոնյուկտիվա խոռոչի տրանսպլանտացիայով	ԴԵՊՔ	175000
2101534	Կերատոպլաստիկա (եղջերաթաղանքի պատվաստում համակցված ներակնային ոսպնյակի տեղադրումով), աֆակիայի դեպքում՝ առանց ոսպնյակի արժեքի	ԴԵՊՔ	175000
2101535	Վիտրեկտոմիա առանց ապակենման մարմնի փոխարինողների ներարկման	ԴԵՊՔ	210000
2101536	Լենսփիտրեկտոմիա առանց ապակենման մարմնի փոխարինողների ներարկման և արիեստական ոսպնյակի	ԴԵՊՔ	210000

2101537	Վիրահատություն ցանցներու շերտապատման կապակցությամբ՝ առանց ապակենման մարմնի փոխարինողների ներարկման	ԴԵՊԹ	210000	
2101538	Վիրտելնյութի + ցիրկլավ առանց ապակենման մարմնի փոխարինողների ներարկման	ԴԵՊԹ	210000	
2101539	Անկազմի բարդ և բարդացած (կոմբինացված, համակցված) վերքերի վիրաբուժական մշակում (բացառապես վնասվածքների ժամանակ)	ԴԵՊԹ	65000	
2101540	Ցանցաթաղանթի պատնեխիայ ֆոտոլազերկուազոլացիա (մեկ աչքը)	ԴԵՊԹ	20000	
2101541	Պտուղի ուղղում՝ առանց սիլիկոնային լարի արժեքի	ԴԵՊԹ	210000	
2101542	Սինտադաբելուլեկտոմիայի վիրահատություն՝ կատարակտայի ֆակոեմուլսիֆիկացիայով ներառյալ ոսպկային արժեքը	ԴԵՊԹ	210000	
2101543	Սիլիկոնի լուղի հեռացում հիվանդանոցային պայմաններում	ԴԵՊԹ	119000	
2101544	Կրոսիկնկեղ (մեկ աչք)	ԴԵՊԹ	98000	
2101545	Կատարակտայի ֆակոեմուլսիֆիկացիա սիլիկոնի լուղի հեռացումով՝ ներառյալ արհեստական ոսպկային արժեքը	ԴԵՊԹ	210000	
6	ՀՀ կառավարության 2008թ. մարտի 27-ի N 276-Ն որոշմամբ հաստատված բժշկական օգնության և սպասարկման տեսակներից բխող՝ բժշկական օգնության կազմակերպման ձևով պայմանավորված պետական պատվերի տեղադրման գործընթացում կիրառվող ծառայություններ			
0207000	Կարճաժամկետ կամ փոքր ծավալի կամ քիչ ծախսատարությամբ հիվանդանոցային բուժօգնություն մասնագիտացված բաժանմունքներում /մեծ/	ԴԵՊԹ	33700	13500
0207001	Կարճաժամկետ կամ փոքր ծավալի կամ քիչ ծախսատարությամբ հիվանդանոցային բուժօգնություն մասնագիտացված բաժանմունքներում /ցեր. ստաց./ /մեծ/	ԴԵՊԹ	13480	5400
0301452	Չորակրթային և նախաճարակրթային տարիքի անձանց մասնագիտական փորձաքննություն՝ հիվ. պայմաններում/18տ.–ից բարձր/	ԽՏՈՐՈՇՈՒ	3000	
0301456	Չորակրթային և նախաճարակրթային տարիքի անձանց մենդի ծախսերի փոխհատուցում (հիվանդանոցում անցկացրած յուրաքանչյուր մահճակալ/օրվա համար) /18տ.–ից բարձր/	ՕՐ	700	700
0301471	ԲՍԲՀ ուղեգրումով հետազոտում /մեծ/	ԽՏՈՐՈՇՈՒ	30000	
0301472	ԲՍԲՀ ուղեգրումով հետազոտում ցերեկային ստացիոնարի պայմաններում /մեծ/	ԽՏՈՐՈՇՈՒ	12000	
0301480	Կարճաժամկետ կամ փոքր ծավալի կամ քիչ ծախսատարությամբ հիվանդանոցային բուժօգնություն նեղ մասնագիտացված բաժանմունքներում /մեծ/	ԴԵՊԹ	34200	13700
0301481	Կարճաժամկետ կամ փոքր ծավալի կամ քիչ ծախսատարությամբ հիվանդանոցային բուժօգնություն նեղ մասնագիտացված բաժանմունքներում /ցեր. ստաց./ /մեծ/	ԴԵՊԹ	13680	5480
0506000	Կարճաժամկետ կամ փոքր ծավալի կամ քիչ ծախսատարությամբ հիվանդանոցային բուժօգնություն մասնագիտացված բաժանմունքներում/երեխա/	ԴԵՊԹ	56000	22400
0506001	Կարճաժամկետ կամ փոքր ծավալի կամ քիչ ծախսատարությամբ հիվանդանոցային բուժօգնություն մասնագիտացված բաժանմունքներում /ցեր. ստաց./ /երեխա/	ԴԵՊԹ	22400	8960
0601451	ԲՍԲՀ ուղեգրումով հետազոտում /երեխա/	ԽՏՈՐՈՇՈՒ	30000	
0601452	ԲՍԲՀ ուղեգրումով հետազոտում ցերեկային ստացիոնարի պայմաններում /երեխա/	ԽՏՈՐՈՇՈՒ	12000	
0601460	Կարճաժամկետ կամ փոքր ծավալի կամ քիչ ծախսատարությամբ հիվանդանոցային բուժօգնություն նեղ մասնագիտացված բաժանմունքներում/երեխա/	ԴԵՊԹ	56700	22700
0601461	Կարճաժամկետ կամ փոքր ծավալի կամ քիչ ծախսատարությամբ հիվանդանոցային բուժօգնություն նեղ մասնագիտացված բաժանմունքներում /ցեր. ստաց./ /երեխա/	ԴԵՊԹ	22680	9080
0611452	Չորակրթային և նախաճարակրթային տարիքի անձանց մասնագիտական փորձաքննություն՝ հիվ. պայմաններում /մինչև 18տ./	ԽՏՈՐՈՇՈՒ	3000	
0611456	Չորակրթային և նախաճարակրթային տարիքի անձանց մենդի ծախսերի փոխհատուցում (հիվանդանոցում անցկացրած յուրաքանչյուր մահճակալ/օրվա համար) /մինչև 18տ./	ՕՐ	700	700
0701030	Մասնագետների կոնսուլտացիա (մեկ հաճախում)	ՀԱՄԱՆՈՒՄ	2000	
0708001	Շուրջօրյա հիվանդ. խմբեր չպահանջող դեպքերի բուժում հիվանդանոցներում (յուրաքանչյուր ավարտված դեպքի համար)	ԴԵՊԹ	20000	
1100006	Կարճաժամկետ կամ փոքր ծավալի կամ քիչ ծախսատարությամբ հիվանդանոցային բուժօգնություն (2Ծ)	ԴԵՊԹ	55000	
1100007	Կարճաժամկետ կամ փոքր ծավալի կամ քիչ ծախսատարությամբ հիվանդանոցային բուժօգնություն ցերեկային ստացիոնարի պայմաններում (2Ծ)	ԴԵՊԹ	22000	
2100006	Կարճաժամկետ կամ փոքր ծավալի կամ քիչ ծախսատարությամբ հիվանդանոցային բուժօգնություն	ԴԵՊԹ	55000	
2100007	Կարճաժամկետ կամ փոքր ծավալի կամ քիչ ծախսատարությամբ հիվանդանոցային բուժօգնություն ցերեկային ստացիոնարի պայմաններում	ԴԵՊԹ	22000	
7	Մի քանի խմբերում կրկնվող ծառայություններ			
1100001	Թերապևտիկ պրոֆիլի (այդ թվում ինֆեկցիոն) և վիրաբուժական բաժանմունքներում կոնսերվատիվ բուժօգնություն՝ առանց ուղեկցող հիվանդությունների և բարդությունների դեպքում	ԴԵՊԹ	150000	1-3 20000,15000
